‹‹ՅՈՒՆԻԲԱՆԿ›› ԲԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ‹‹ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ››, ‹‹ԵՐԵՎԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ)› ՄԱՍԻՆ›› ԵՎ ‹‹ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ›› ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 մայիսի 2020 թվական

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն ու 287-Ն որոշումները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 30.03.2020 թվականի տրված թիվ Ն/ՍԱԾ/8605-2020 լիազորագիրը) (այսուհետ՝ Նախարարություն), և ‹‹Յունիբանկ›› ԲԲԸ-ը, ի դեմս վարչության նախագահ Մեսրոբ Հակոբյանի (այսուհետ՝ Բանկ) (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **2020 թվականի հուլիսի 1-ից** լուծել Նախարարության (Սոցիալական ապահովության ծառայության) և Բանկի միջև կնքված ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին››, ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) մասին››, ‹‹Մայրության նպաստն անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագրեր) և դրանց անբաժանելի մասը կազմող բոլոր համաձայնագրերը:

2. Պայմանագրերի լուծելու օրվա դրությամբ դրանցով ստանձնած պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

2.1. ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ կետի 13-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (2-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գումարի համար,

2.2. ‹‹Մայրության նպաստն անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված գումարի համար,

2.3. ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2.3.8-րդ ենթակետում նշված տեղեկատվության (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 5-10-րդ ենթակետերում նշված գումարների համար, **իսկ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284 որոշման շրջանակներում՝** ժամկետը սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի

մայիսի 5-ի N 670-Ն որոշման N 2 հավելվածի 2.3.5-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը ներառյալ:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն Համաձայնագիրը կազմված է երեք (3) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	‹‹Յունիբանկ›› ԲԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13	Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53 1-5
Հեռ. 060-654-002	Հեռ. 010-59-22-59
Էլ. փոստ info@ssa.am	Էլ. փոստ unibank@unibank.am ՀՎՀՀ 02559077
Սոցիալական ապահովության ծառայության պետ **Անի Ամիրշարյան** _____ (ստորագրություն և կնիք)	**Վարչության նախագահ** **Մեսրոպ Հակոբյան** _____ (ստորագրություն և կնիք)